

19905



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«10» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 212 - 24

- Նախաձեռնող՝ «Երկրապարաժական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի 11/12
- Գործունեությունը՝ «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատում
Լոռու մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 212 - 24

« 10 » հոկտեմբեր 2024թ.

**«Թումանյան անտառտնտեսության» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման
պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակ՝	Հիմնադրույթային փաստաթուղթ / ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, անտառկառավարման պլան, գծագրական նյութեր, քարտեզներ
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ

Ներածական մաս. Լոռու մարզի «Թումանյան անտառտնտեսության» մասնաճյուղի անտառկառավարման պլանի մշակման համար հիմք են հանդիսացել շրջակա միջավայրի նախարարության՝ Անտառային կոմիտեի և «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի մայիսի 19-ին կնքված N ՇՄՆԱԿ-ԲՄԱՇՁԲ-23/01-2 պայմանագիրը: ՌԷԳ հաշվետվությունը կազմվել է՝ համաձայն Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Թումանյանի անտառտնտեսության» մասնաճյուղի անտառկառավարման պլանը (այսուհետ՝ Անտառտնտեսություն) հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. «Թումանյանի անտառտնտեսության» մասնաճյուղը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելքում՝ Լոռու մարզի վարչական տարածքում: Անտառտնտեսության գրասենյակը գտնվում է Ալավերդի քաղաքում, մարզկենտրոն Վանաձորից՝ 50 կմ և Երևանից 169 կմ հեռավորության վրա: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից-հարավ 35 կմ է, արևելքից-արևմուտք՝ 32 կմ: Անտառտնտեսությունը հարավ-արևմուտքից սահմանակցում է Գուգարքի, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից՝ Ջիլիգայի, իսկ հյուսիս-արևելքից և արևելքից՝ Նոյեմբերյանի անտառտնտեսություններին:

Անտառտնտեսության հարավային և հյուսիս-արևմտյան սահմանները եզրվել են միջին բարձրության լեռներով, որոնց բարձրությունը ծովի մակարդակից կազմել է 1000-2500 մ, իսկ բուն Անտառտնտեսության տարածքի գերակշիռ մասը ներկայացված է եղել ցածր լեռներով և բլրավետ սարավանդներով, որոնց բարձրությունը ծովի մակարդակից կազմել է 300-1000 մ:



Տարածաշրջանի սահմաններում է գտնվում չոր մերձարևադարձային շրջանը, որում անտառային զանգվածները տեղակայված են ծովի մակերևույթից 500-900 մ բարձրությունների վրա:

Անտառտնտեսության՝ Վիրահայոց լեռներում ռելիեֆի հիմնական ձևը շրջված ռելիեֆի տիպն է: Գլխավոր հատվածը կազմող Լավարի զանգվածը մասնատված է ճառագայթաձև տարածում ունեցող բազմաթիվ գետահովիտներով՝ դեպի հյուսիս հոսող՝ երկար և դեպի հարավ-արևելք հոսող՝ կարճ գետերով: Լավարի հարավ-արևելյան լանջերը կտրտված են խոր ձորերով, որոնք սանդուղքաձև ցածրանում են դեպի կից հովիտները:

Անտառտնտեսության սահմաններում ներկայանում են մարգագետնա-տափաստանային անտառային հողերը, անտառային գորշ և դարչնագուն հողերը և սևահողերն իրենց ենթատիպերով:

Լոռու մարզն առանձնանում է ջրագրական խիտ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի առանձնահատկություններով, մթնոլորտային առատ տեղումներով: Մարզի տարածքում հոսում են 1356 գետեր և գետակներ, որոնք օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով: Անտառտնտեսության տարածքում առկա են 5 հանքային ջրերի աղբյուրներ: Հանքային ջրերի դեբիտը չի գերազանցում 1 լ/վրկ:

Անտառտնտեսության տարածքում լճերը բացակայում են, սակայն անտառային հողերի անմիջապես հարևանությամբ գտնվում է Դսեղի «Ծովեր» լիճը (3.5 հա):

Լոռու մարզին և Անտառտնտեսության տարածքին բնորոշ է փոքրկովկասյան մեզոֆիլ բարձունքային գոտիականությունը: Հիմնականում ներկայացված են կովկասյան լայնատերև անտառներին բնորոշ տեսակներ:

Լանջերն, ըստ թեքության, բաժանվել են թեթև զառիվայր՝ մինչև 100, զառիվայր՝ 11-200, կտրուկ՝ 21-300 և խիստ կտրուկ՝ 300-ից բարձր:


Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը գերազանցում է 800 մմ և մոտենում 900 մմ, իսկ օդի միջին տարեկան ջերմաստիճանը հասնում է 8.9°C-ին: Անտառտնտեսության կենդանական աշխարհը բազմազան է և հարուստ: Կլիմայական պայմանները բարենպաստ են բույսերի աճի ու զարգացման համար:

Անտառտնտեսությունը կազմավորվել է 1931թ. որպես Ալավերդու անտառտնտեսություն, ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի 09.11.1976թ. թիվ 588 որոշման համաձայն վերակազմավորվել է որպես «Թումանյանի անտառտնտեսություն»՝ իր մեջ ներառելով Շնողի, Շամլուղի, Ալավերդու և Դսեղի անտառապետությունները: 2021թ. անտառտնտեսությունների վերամիավորման արդյունքում կրկին վերակազմակերպվել է որպես «Թումանյանի անտառտնտեսություն»:

Անտառտնտեսության սահմանները որոշվել են առաջնորդվելով սահմանազատման համար հիմք հանդիսացող ռելիեֆային առանձնահատկություններով՝ ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր, ճանապարհներ և այլն: Սահմանագծումը կատարվել է նաև խոշորամասշտաբ տեղագրական քարտեզների և արբայնակային պատկերների վերծանման արդյունքների հիման վրա:

Անտառտնտեսության տարածքն ընկած է (WGS (ARMREF 02) հյուսիսային լայնությունների՝ 40°50'34.536"-41°9'26.11" և արևելյան երկայնությունների՝ 44°31'48.835"-44°54'34.545 միջև:

Անտառտնտեսությունը ներառում է 8՝ Թումանյան (7727.8 հա), Սանահին (4802.7 հա), Ծաղկաշատ (5952.7 հա), Շնող (7229.6), Դսեղ (4356,4 հա), Մարց (5425,9 հա), Լորուտ (2143,3 հա), Մոտկոր (5800,8 հա) անտառապետությունները: Անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմում է 43498,4 հա, որը բաժանված է 174 քառակուսիների:



Ամենափոքր քառակուսու մակերեսը 28.3 հա է, իսկ ամենամեծ քառակուսու մակերեսը՝ 737.7 հա:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ ընդհանուր մակերեսը կազմում է 36938.0 հա (84,9 %), որից 367 հա-ը (0,8 %) անտառմշակույթներ են, 36570.2 հա-ը (84,1%) բնական ծագման անտառներ են (կաղամախի՝ 144,5 հա և սոճի՝ 8,5 հա), անտառային բացատները և պարապուտները՝ 1534,9 հա, նսրուտները՝ 338,0 հա: Ընդհանուր ոչ անտառային հողերի մակերեսը զբաղեցնում է 1123,9 հա, որից խոտհարքերը՝ 194,9 հա, արոտավայրերը՝ 321,1 հա, ջրային մակերեսը՝ 162,9 հա, այգիները (խաղողի, թթի, հատապտղային և այլն)՝ 5,6 հա, քարացրոնները՝ 4,6 հա:

Պաշտպանական նշանակության անտառների հողերի ընդհանուր մակերեսը կազմում է ընդհանուր տարածքի 64.4 % (28003.7 հա), հատուկ նշանակության անտառների հողերի ընդհանուր մակերեսը կազմում է ընդհանուր տարածքի 9.8 % (4265.7 հա): Մնացած՝ 11229 հա մակերեսը կամ ընդհանուր տարածքի 25.8 %-ը կազմում են արտադրական նշանակության անտառները:

Անտառածածկ մակերեսում գերակշռում են համեմատաբար հարուստ ու խոնավ աճելավայրերը: Տարախոտային և շյուղախոտային տիպերը գերակշռում են և համապատասխանաբար կազմում են տարածքի 43.8 % (16194.8 հա) և 33.6 % (12437.7 հա): Դրա հետ մեկտեղ գերակշռում են համեմատաբար հարուստ հողերը (C և D), որոնց տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմում է 60.4 % կամ 22325.6 հա:

Անտառտնտեսությունում կատարվել է անտառային հողերի մակերեսի ավելացում, սակայն

Անտառտնտեսությունում վերջին ստուգիչ շրջանում նվազել է անտառածածկ մակերեսը (1904.2 հա-ով) ու մարզի անտառապատվածության տոկոսը: Անտառապատվածության նախկին 38844.7 հա փոխարեն այն ներկայումս կազմում է 36938 հա: Աճ է գրանցվել անտառային հողերի մակերեսների, որը նախկինի համեմատ ավելացել է 1433 հեկտարով (աճ 3.5%-ով):

Նվազել է ծառուտների միջին տարիքը 119 տարեկանից իջնելով 100 տարեկանի: Աճել են փափկատերևավորների մասնաբաժինը, գրանցելով 3.19 անգամյա աճ նախորդի նկատմամբ (48.8-155.8 հա):

Անտառաշինությամբ նշանակված (անտառվերականգնման, խնամքի ու սանիտարական հատումները, բնական ու արհեստական անտառաճեցումը) միջոցառումներն ապահովելու են նպատակային տեսակների պահպանությունն ու անտառի կազմի հարստացումը:

Անտառածածկ տարածքի և պաշարի տեղաբաշխումն ըստ գերակշռող տեսակների ասեղատերևավորները և տերևավորներն են: Ասեղնատերևավորներից հիմնական անտառկազմողը սոճին է՝ ասեղնատերևավորների 96.7 %-ն է ըստ մակերեսի և 99.7%-ը՝ ըստ պաշարի: Տերևավորների ընդհանուր մակերեսը 36737.9 հա է (99.45 %), 5848312 խմ պաշարով (99.42 %):

Հաճարենու գերիշխության անտառների մակերեսը կազմում է 19513.5 հա (ընդհանուր մակերեսի՝ 52.8 %-ը), իսկ պաշարը՝ 3550912 խմ է կամ ընդհանուր պաշարի 69.8 %-ը:

Կաղնու համակեցությունները զբաղեցնում են 7756.6 հա (ընդհանուր մակերեսի՝ 20.99 %-ը), իսկ պաշարը կազմում է՝ 794279 խմ, որն ընդհանուր պաշարի 15.62 %-ն է: Սերմնային ծագման կաղնին գերակշռում է:

Մնացած տեսակները միասին կազմում են ըստ մակերեսի՝ 1760.7 հա (4.46 %) և ըստ պաշարի՝ 137443 խմ (2.33 %): Միջին պաշարը 1 հա հաշվով կազմում է 137 խմ:



Անտառտնտեսության անտառածածկ տարածքի մակերեսի 42.3 %-ը (15659.9 հա), որի պաշարը կազմում է 2235456 խմ (ընդհանուր պաշարից՝ 44%-ը), տեղակայված լինելով բարձր թեքության լեռնալանջերի վրա (300°-600°), կատարում են բացառիկ պաշտպանական դեր և ունեն մեծ հողապաշտպան, ջրապահպան, ջրակարգավորիչ նշանակություն:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 452 հավազայնուտ և անհետացող տեսակներից 10-ը հանդիպում են Անտառտնտեսության տարածքում, այդ թվում 2 ծառաբույսեր: Կարմիր գրքում գրանցված 10 հազվագյուտ սնկերից Անտառտնտեսության տարածքում հանդիպում է միայն սպիտակ սունկը, թնջուկը /Boletus edulis BULL.: FR./, որը համարվում է վտանգված տեսակ (VU): Անտառտնտեսության տարածքում հանդիպում են 5 էնդեմիկ բուսատեսակներ, որոնց թվում ծառաբույսերը բացակայում են: Անտառտնտեսության տարածքում հանդիպող Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակներն անվանական ներկայացված են գնահատման հաշվետվությունում:

Անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն, վաղուց և տարբեր նպատակներով կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների տարածքում լայն տարածում ունեն ուտելի բույսերը (135), դեղաբույսերը (170): Այս բույսերի շարքում շատ են մեղրատու, կերային, եթերայուղատու և այլ տնտեսական նշանակության բուսատեսակները:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից անտառտնտեսության տարածքում հանդիպում են 25 հազվագյուտ կենդանատեսակներ:

Անտառտնտեսության տարածքում հանդիպում են Լոռու մարզում գրանցված 10 բնության հուշարձանից 4-ը, որոնցից 2 երկրաբանական է, 1-ը՝ ջրագրական, 1-ը՝ բնապատմական: Կենսաբանական և ջրաերկրաբանական բնության հուշարձանները բացակայում են:

Անտառտնտեսության տարածքում գրանցված են 31 պատմամշակութային հուշարձաններ, որոնք անհավասարաչափ են բաշխված Անտառտնտեսության անտառապետություններում: Պատմամշակութային հուշարձաններով հատկապես աչքի են ընկնում Դսեղի, Թումանյանի և Սանահինի անտառապետությունները:

Վերլուծելով անտառտնտեսության տարածքում առկա էկոերթուղիները՝ մշակվել է ևս 1 Քարինջ-Մրձաքար-Դժասար-Ծաղկաշատ էկոերթուղի, որը համակարգվելու է Անտառտնտեսության կողմից: Առաջարկվող երթուղու ընդհանուր երկարությունը 25.9 կմ, որից՝ 19.6 կմ Անտառտնտեսության տարածքում: Երթուղու հարաբերական բարձրությունների տարբերությունը կազմում է 1320 մ:

Անտառապետություններից համեմատաբար բարձր հրդեհավտանգությամբ (1 և 2 դաս) առանձնանում է Շնողի անտառապետությունը՝ 1071 հա (24.6%) և 924 հա (21%): Անտառային հրդեհների կանխարգելման, նրանց տարածման ու մարման համար անտառաշինության կողմից նախագծված են հակահրդեհային համալիր միջոցառումների անցկացում:

Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման շրջանակներում սահմանվել են՝ «Թումանյանի անտառտնտեսության» մասնաճյուղի առաջնային և երկարաժամկետ նպատակները: Կատարվել են տարածքի անտառների և անտառային հողերի քարտեզագրում՝ ըստ անտառի կառավարման պլանի, բունիտետի, լրիվության, գերակշռող ծառատեսակների, հասակային դասերի, տարիքային խմբերի, սպատակային նշանակության, հրդեհանվտանգավորության դասերի և այլն: Կատարվել է սահմանների ճշգրտում, անտառային հատվածների գույքագրում, սերմնային տարածքների վեր հանում և պոտենցիալ գնահատում: Կատարվել է անտառապատման, անտառվերականգնման,



անտառապահպանության և անտառօգտագործման ծավալների, անտառային կողմնարդյունքի, անտառամերձ համայնքների բնափայտի և անտառի կողմնարդյունքի կարիքների, անտառային պաշարների օգտագործման գնահատում:

Վեր է հանվել անտառանյութի օգտագործման սոցիալական և տնտեսական ազդեցությունը (բնափայտ, արոտավայրեր, կենսաարտադրանք, տեղական բնակչության զբաղվածություն, չքավորության աստիճան և եկամուտների ստացման հնարավորություններ, բնապատմական հուշարձանների դերը), ինչպես նաև դրանց նշանակությունը՝ տեղական կարիքների բավարարման տեսանկյունից: Սահմանում է հատումների թույլատրելի քանակները, անտառապատմանը, անտառվերականգնմանը, անտառապահպանմանն ուղղված միջոցառումները:

Նախատեսվում է նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և քարտեզագրման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքները, միջոցառումները:

Համաձայն հաշվետվության՝ տարածաշրջանի հարուստ բնությունը, կենսաբազմազանությունը, լանդշաֆտային տիպերը, մաքուր օդն ու ջուրը, բազմաթիվ պատմամշակութային կառույցների առկայությունը նախադրյալներ են ստեղծում անտառտնտեսության տարածքում էկոտուրիզմի զարգացման համար: Էկոզբոսաշրջության ճիշտ կազմակերպումը կնպաստի անտառների կայուն կառավարմանը:

2008-2022թթ. ստուգիչ շրջանի ընթացքում 50.9 հա անտառային մշակույթների հիմնադրման համար ընտրված է եղել հողի նախապատրաստման խրամատային եղանակը՝ մեկ հեկտարի հաշվով միջինը՝ 2500 գծմ: Տնկված մշակույթները, ըստ կազմի, եղել են խառը: Տեղաբաշխման սխեման՝ մեկ տեսակի (կաղնի) շարքին հաջորդել է մյուս տեսակը (թխկի, հացենի, հաճարենի) կամ հակառակը:

2024-2033թթ. անտառկառավարման պլանով նախատեսվել են 1313 հա մակերեսի անտառվերականգնման բնական վերածի աջակցության միջոցառումներ՝ ցածր լրիվության ծառուտներում ու նոսրուտներում, որոնցում բացակայում է բնական մատղաշը:

Նախորդ ստուգիչ շրջանում անտառապատման և անտառվերականգնման նպատակով նախատեսվել է անտառային մշակույթների հիմնում՝ 719.8 հա մակերեսով, անտառի ցանկապատում 45500 գծամետր ծավալով՝ մատղաշի պահպանման, բնական վերածի աջակցման նպատակով: 2024-33թթ ընթացքում Անտառտնտեսության անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների ծավալները ներկայացված են Հաշվետվությունում բովանդակային և աղյուսակների տեսքով:

Անտառային հողերի արդյունավետության բարձրացման նպատակով անտառաշինությամբ նախատեսվում են.

- անտառուերմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա,
- անտառային մշակույթների հիմնում, ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- անտառվերականգնմանն օժանդակող համալիր միջոցառումներ,
- խնամքի հատումների իրականացում,
- անտառապահպանական և անտառապաշտպանական աշխատանքների բարելավում, ընտրովի սանիտարական հատումներ,
- հողերի պահպանություն՝ հակաէռոզիոն, ագրոտեխնիկական,
- խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներ են) կատարվող գործողությունների վերահսկում՝ բացառելով վերջիններիս բացասական անդրադարձը սերմնային ինքնավերականգնման վրա և այլն:



Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակների հիմնման միջոցով ընդլայնվելու է անտառածածկ մակերեսը, վերականգնվելու են հատված կամ քայքայված անտառները, ծառուտները ձևավորվելու են ցանկալի ուղղությամբ, նպաստելով կենսաբազմազանության հաստատմանը և պահպանմանը:

Խնամքի հատումներն օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարահիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

Ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն կընձեռեն բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու ստուգիչ շրջանում անտառածածկ մակերեսը, բարելավելու տեսակային կազմը և ստանալու ծառուտների լրացուցիչ աճ:

Հիմնադրությային փաստաթղթով նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում, Անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում: Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և անթրոպոգեն նոսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև անտառվերականգնման օժանդակող միջոցառումների հաշվին:

Հիմնադրությային փաստաթղթով նախատեսվում է անտառպահպանման, անտառհատման, անտառի բնառեսուրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանը կամ կանխարգելմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացում, դրանց թվում նաև՝

- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացմանն ուղղված ուսումնասիրությունների և հստակ միջոցառումների իրականացում (տարեկան) և այլն,
- հակահրդեհային միջոցառումների իրականացում,
- հակահրդեհային նշանակության ջրամբարների կառուցում՝ 1 հատ,
- ջրամբարների օգտագործում տնկարանի ոռոգման նպատակով՝ բույսերի աճն ապահովելու նպատակով,
- տարածքի էկոլոգիական հավասարակշռության, կենսաբազմազանության, ինչպես նաև կենսամիջավայրի բնական պայմանների հնարավորինս պահպանում,
- սերմնային ծագման արևելյան հաճարենու, խոշորառէջ կաղնու, սովորական սոճու, սովորական հացենու, սրատերև թխկու, կովկասյան լորենու 153,5 հա ընդհանուր մակերեսով՝ մշտական անտառուսերմնային տեղամասերի առանձնացում,
- ՀՀ Կարմիր գրքում վտանգված կենդանատեսակների պահպանություն, որսագողության դեմ պայքարի իրականացում, դրանց ռացիոնալ օգտագործում, վերարտադրություն և պահպանություն,
- խախտված անտառային լանդշաֆտների և դեգրադացված անտառների վերականգնում, դրանց պահպանության ապահովում, որը կնպաստի վտանգված տեսակների, պոպուլյացիաների և էկոհամակարգերի վիճակի բարելավմանը,
- կենսաբազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների արկա վիճակի և միտումների բացահայտում (տարեկան), տարածքի էկոլոգիական



հավասարակշռության, կենսաբազմազանության, ինչպես նաև կենսամիջավայրի բնական պայմանների պահպանում,

- վնասատուների դեմ պայքարի դեպքում՝ հնարավորիս ավիացիոն պայքարի ձևերից խուսափում և կենսաբանական պայքարի տեսակի կիրառում: Ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում վերջինիս տեղայնացնում՝ թույլ չտալով բռնկումից դուրս տարածքներում գործողությունների ընդլայնումը: Թունաքիմիկատների օգտագործման դեպքում՝ ցանկի համաձայնեցում մասնագետների հետ,
- հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում (25 կմ), հակահրդեհային նշանակության ճանապարհների նորոգում (45 կմ),
- հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում աշխատանքները դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան պետական մարմնին,
- բնության հատուկ պահպանվող տարածքներում անտառի օգտագործումն իրականացնել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՀ օրենքի համաձայն և այլն:

Հիմնադրությային փաստաթղթով նախատեսվող համալիր միջոցառումների և մոնիթորինգի արդյունքում Անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա դեգրադացված անտառների վերականգնում, անտառածածկ տարածքի ընդարձակում և տեսակարար կշռի ավելացում, ծառուտի կազմի բարելավում, անտառի արտադրողականության բարձրացում, անտառօգտագործման ֆինանսական բազայի կայունություն, անտառի՝ մթնոլորտից ածխածնի կլանման կարողությունների վերականգնում, անտառային էկոհամակարգի կայուն զարգացում:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Պատճառաբանական մաս. Հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործողություններն իրականացվելու են «Թունանյանի անտառտնտեսության» ընդհանուր տարածքում: Անտառի կայուն կառավարումը նպատակաուղղված է դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական, օգտակար հատկությունների պահպանմանը և անտառների կայուն օգտագործմանը: Այն նպաստում է անտառային ոլորտի զարգացմանը, շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, անտառային արդյունաբերության համայնքային զարգացման հնարավորությունների համապատասխանեցմանը:

Անտառտնտեսության զարգացման համար հիմնական վտանգ է ներկայացնում նաև մարդու տնտեսական գործունեությունը: Բուսականության այրումը կամ մաքրումը, ապօրինի անտառահատումները, որսագողությունը, արոտավայրերի կառավարման բացակայությունը, օրգանական և անօրգանական թափոններով կենսամիջավայրի աղտոտումը խախտում և քայքայում են բնական կենսամիջավայրը:

Հիմնադրությային փաստաթղթով նախատեսվում է անտառպահպանման, անտառահատման, անտառի բնառեստրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացում: Նախատեսվող միջոցառումների ծրագրի համար հիմք են հաղիսացել ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ.), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Անտառտնտեսության 2024-2033թթ.



կառավարման պլանը, անտառտնտեսության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական ակտերը և միջազգային պայմանագրերը:

Փորձաքննության գործընթացում Անտառտնտեսության 2024-2033թթ. կառավարման պլանի հիմնադրությային փաստաթուղթը կից նյութերով լրամշակվել է՝ հաշվի առնելով անտառտնտեսությունում ընդգրկված անտառպետությունների և ընդգրկված և հարակից համայնքների կողմից ներկայացված առաջարկությունները և դիտողությունները: Փորձաքննության փուլում օրենսդրությամբ սահմանված կարգով Լոռու մարզպետարանում իրականացվել է հանրային լսում:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրությային փաստաթղթով նախատեսված միջոցառումները կատարել նախատեսված ժամանակահատվածում:
- Հիմնադրությային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:
- Կարևորելով համայնքների հողային հաշվեկշիռներում անտառային նպատակային նշանակության հողերի, դրանց հողատեսքերի ճշգրիտ հաշվառման անհրաժեշտությունը՝ ծրագրի իրականացման ընթացքում հստակեցնել հիմնադրությային փաստաթղթով ամրագրված անտառտնտեսության սահմանները և դրանք սահմանված կարգով ներկայացնել իրավունքների պետական գրանցման:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Թումանյանի անտառտնտեսության» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան